Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

Վահան Մարտիրոսյան, Սուրեն Կարայան, Հովհաննես Ազիզյան, Գագիկ Գրիգորյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի ղեկավար

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն՝ քաղաք Պեկին

2017 թվականի մայիսի 12-ից 15-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի նախարարություն,

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ազգային զարգացման և բարեփոխումների հանձնաժողով

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» միջազգային համագործակցության ֆորումին

♦ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

«Մեկ գոտի, մեկ ճանապարհ» միջազգային համագործակցության ֆորումը իրենից ներկայացնում էր Մետաքսե ճանապարհ տնտեսական գոտու և 21-րդ դարի ծովային մետաքսե ճանապարհի համատեղ կառուցումը, որը 2013 թվականին ձեռնարկել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նախագահ Սի Ծինփինը:

Միջազգային համագործակցության ֆորումի բացմանը մասնակցում էր նաև ՉԺՀ նախագահ Սի Ծինփինը, որը նաև հանդես եկավ ելույթով:

Միջոցառմանը մասնակցում էին 29 երկրների ղեկավարներ, 130 երկրների կառավարության ներկայացուցիչներ, 70 միջազգային կազմակերպություններ և բազմաթիվ այլ ընկերություններ:

Ֆորումի շրջանակներում տեղի են ունեցել բարձրաստիճան երկխոսություններ, լիագումար նիստ և պանելային 6 քննարկումներ, որոնք ուղղված էին քաղաքականության համակարգմանը, կապի միջոցներին, ֆինանսական ներգրավմանը, երկկողմ շահավետ արդյունքների և ընդհանուր զարգացման նպաստմանը, ինչպես նաև անարգելք առևտրին վերաբերող մի շարք հարցերին: Քննարկվել են նաև գոտու և ճանապարհի համատեղ զարգացումն ու երկկողմ շահութաբեր համագործակցությունը:

Միջոցառման ընթացքում կարևորվել է ԵԱՏՄ-ի շրջանակներում ձեռնարկված ենթակառուցվածքային նախագծերը և «Մեկ գոտի, մեկ ճանապարհ»-ի նախաձեռնությունները, որոնք կնպաստեն Եվրասիական մայրցամաքի նոր տրանսպորտային կոնֆիգուրացիայի ստեղծմանը: Նշվել է նաև, որ ինտեգրման համար անհրաժեշտ է հանել ենթակառուցվածքային սահմանափակումները և ստեղծել կապակցված ժամանակակից տրանսպորտային միջանցքների համակարգ:

Համաժողովի ընթացքում նախարար Վահան Մարտիրոսյանը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության այն ենթակառուցվածքային ծրագրերը, որոնց իրականացումը կնպաստի բարելավելու Հայաստանի տարանցիկ հնարավորությունները՝ Արևելյան Ասիայով կապ հաստատելու Ռուսաստանի Դաշնության և եվրոպական այլ երկրների հետ:

Հաշվի առնելով, որ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը Մետաքսի ճանապարհի մի հատվածն է, ի թիվս այլ հարցերի՝ քննարկվել են նաև Հայաստանի տարածքով տարանցիկ բեռնափոխադրումներ իրականացնելու հնարավորությունները և դրանց ծավալը մեծացնելու նախապայմանները:

♦ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Միջոցառումը հնարավորություն է ընձեռել հանդիպումներ ունենալ մի շարք խոշորագույն չինական ընկերությունների հետ՝ տրանսպորտի, ճանապարհաշինության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում հնարավոր համագործակցության ուղղությունները քննարկելու նպատակով:

Չինական «Պոլի» ընկերության փոխնախագահ Դաի Նինգի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են գործակցության հնարավորությունները: Առաջիկայում նախատեսվում է «Պոլի» ընկերության ներկայացուցիչների այցը Հայաստան, որի ընթացքում էլ առավել համակողմանի կքննարկվեն համագործակցության ուղիները:

ՀՀ պատվիրակությունը հանդիպել է նաև «Avic» ընկերության փոխնախագահ Վանգ Ռունլանին: Ընկերությունը մասնագիտացած է ենթակառուցվածքների նախագծման գործում: Հանդիպման ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ ճանապարհաշինության ոլորտում հետագա համագործակցության ուղղությամբ:

Միջոցառման շրջանակներում տեղի են ունեցել երկկողմ հանդիպումներ Վրաստանի փոխվարչապետ, ֆինանսների նախարար Դ. Քումսիշվիլիի, Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար Գ. Գախարիայիի և Բելառուսի տրանսպորտի և հաղորդակցության նախարար Ա. Սիվակի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, ինչպես նաև տրանսպորտային խնդիրները և դրանց լուծմանն ուղղված քայլերը:

ՎԱՀԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ